ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ
2011-2012

Մարշալ Բաղրամյան 40
Երևան, 0019, Հայաստան
Հեռ. (374-10) 512791, 512792
admission@aua.am
www.aua.am

ՀԱՀ-ը հավատարմագրված է ԱՄՆ դպրոցների և քոլեջների արևմտյան ասոցիացիայի կողմից և հանդիսանում է ԱՄՆ Քալիֆորնիայի համալսարանի գործակիցը:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ 2012

Ամբողջ տարվա ընթացքում ընդունելություն է կատարվում բարձր առաջադիմություն ունեցող դիմորդների համար: Հավելյալ տեղեկություններ ստանալու համար գրել admission@aua.am էլ. հասցեին:

2011-2012 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԱՑՈՒՅՑ

ԱՇՆԱՆԱՅԻՆ ՔԱՌՈՐԴ 2011

Դասերի սկիզբ	2011 09 26
Գրանցված առարկայի փոփոխման վերջնաժամկետ	2011 10 07
Դասերի ավարտ	2011 12 02
Եզրափակիչ քննություններ	2011 12 03-09
Քառորդի ավարտ / գնահատականների ներկայացման վերջնաժամկետ	2011 12 14

ՁՄԵՌԱՅԻՆ ՔԱՌՈՐԴ 2012

Դասերի սկիզբ	2012 01 09
Գրանցված առարկայի փոփոխման վերջնաժամկետ	2012 01 20
Դասերի ավարտ	2012 03 08
Եզրափակիչ քննություններ	2012 03 17-22
Քառորդի ավարտ / գնահատականների ներկայացման վերջնաժամկետ	2012 03 23

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՔԱՌՈՐԴ 2012

Դասերի սկիզբ	2012 04 02
Գրանցված առարկայի փոփոխման վերջնաժամկետ	2012 04 04
Դասերի ավարտ	2012 06 08
Եզրափակիչ քննություններ	2012 06 09-15
Քառորդի ավարտ / գնահատականների ներկայացման վերջնաժամկետ	2012 06 18

ԱՄԱՌԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ 2012

Ուսումնական շրջան	2012 07 09-09 09
Ուսումնական շրջանի ավարտ/գնահատականների ներկայացման վերջնաժամկետ	2012 09 16

ԱՇՆԱՆԱՅԻՆ ՔԱՌՈՐԴ 2012

Դասերի սկիզբ	2012 09 24
Գրանցված առարկայի փոփոխման վերջնաժամկետ	2012 10 05
Դասերի ավարտ	2012 11 30
Եզրափակիչ քննություններ	2012 12 01-07
Քառորդի ավարտ / գնահատականների ներկայացման վերջնաժամկետ	2012 12 12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) ցանկանում է իր ուսանողների շարքերում տեսնել ցայտուն ուսումնական առաջադիմություն, բարձր մտավոր ներուժ ունեցող անհատներ, որոնց նպատակները համահունչ են ՀԱՀ-ի՝ Հայաստանում և տարածաշրջանում ղեկավար դիրքեր ստանձնող անհատներ պատրաստելու ցանկության հետ: Ուսանողների ընտրությունը կատարվում է՝ հաշվի առնելով ուսումնական արդյունքները և աշխատանքային փորձը, ինչպես նաև անձնական և ուսումնական հաջողությունները:

Ընդունելության պայմանները

ՀԱՀ-ի մագիստրոսի կոչում կամ վկայագիր շնորհող ծրագրերին դիմելու համար դիմորդի տվյալները պետք է բավարարեն ընդունելության ընդհանուր և ծրագրերին հատուկ պահանջներին:

Ուսումնական օրացույց

ՀԱՀ ուսանողներն ընդունվում են տարին մեկ անգամ: Դասընթացները սկսվում են աշնանային քառորդով և ընթանում են երեք ուսումնական քառորդների ընթացքում՝ աշնանային, ձմեռային և գարնանային:

Բոլոր ծրագրերի դասընթացները սկսում են աշնանային քառորդով:
Հանրային առողջապահության մագիստրոսի կոչում շնորհող ծրագիրն ընդունելությունը կատարում է երկու տարին մեկ անգամ:

Դիմելու կարգը

Դիմորդը, ընդունելության ժամկետներին համապատասխան, ՀԱՀ-ի ընդունելության գրասենյակ պետք է ներկայացնի անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջական փաթեթը: Փաթեթը պետք է ներառի.
(ա) Լրացված դիմումածև, ներառյալ նպատակի շարադրանք (ընտրված յուրաքանչյուր ծրագրի համար)
(բ) Դիմորդի բարձրագույն կրթության դիպլոմ կամ դիպլոմներ (բնօրինակ և պատճեն): Դիմորդները պետք է ունենան 4-5 տարվա կրթություն հավատարմագրված բարձրագույն կրթական հաստատությունից, կամ Հայաստանում լիցենզավորված բարձրագույն կրթական հաստատությունից:
(գ) ԲՈՒՀ-ի գնահատականների ավարտական միջուկ (բնօրինակ և պատճեն): Եթե բնօրինակն անգլերեն, հայերեն կամ ռուսերեն չէ, ապա անհրաժեշտ է նոտարի կողմից հաստատված անգլերեն թարգմանություն: Ներկայացված ներդիրում պետք է նշված լինեն դիմորդի անցած բոլոր դասընթացները և գնահատականները: Այն դիմորդը, ով դիմումածևերի հանձնման ժամանակ ավարտական կուրսի ուսանող է և դեռևս չունի դիպլոմի ներդիր, պետք է ներկայացնի իր անցած դասընթացներն ու գնահատականները հաստատող տեղեկանք՝ ստորագրված ֆակուլտետի դեկանի կողմից՝ մինչև փաստաթղթերի հանձնման վերջնաժամկետը:
(դ) Երեք երաշխավորագիր նամակ
(ե) Անձնագիր (բնօրինակ և պատճեն՝ 1-ին էջը և գրանցման էջը)
Օտարերկյա դիմորդները և բոլոր նրանք, ովքեր անձամբ չեն ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը, պետք է գործերին կցեն նաև անձնագրի վերոհիշյալ էջերի վավերացված պատճենները:
(զ) Անգլերենի որպես օտար լեզվի ինտերնետային TOEFL (TOEFL iBT) քննությունից 79 միավոր կամ 6.5 միավոր IELTS անգլերեն լեզվի միջազգային քննությունից (արդյունքները առավելագույնը 2 տարվա վաղեմություն կարող են ունենալ):

(է) GRE, GMAT կամ LSAT քննությունների միավորներ (արդյունքները առավելագույնը 5 տարվա վաղեմություն կարող են ունենան)
(ը) Դիմումավճար (6,000 ՀՀ դրամ՝ Հայաստանի և Հայաստանում երկարաժամկետ կացության կարգավիճակ ունեցող քաղաքացիների համար և 28,000 ՀՀ դրամ՝ օտարերկյա քաղաքացիների համար. գումարը վերադարձման ենթակա չէ):

Հավելյալ պահանջներ

(1) Գործարար կառավարման բաժնի դիմորդները պետք է վերոնշյալ փաստաթղթերին կից ներկայացնեն աշխատանքային գրքույկ՝ բնօրինակ և պատճեն կամ պաշտոնական նամակ/նամակներ իրենց նախկին/ներկա աշխատավայրից/աշխատավայրերից:
(2) Գործարար կառավարման բաժնի դիմորդները պետք է լրացնեն նաև հավելյալ դիմումաձև:

* Հիմնական ծրագիր ընդունված բոլոր ուսանողները պետք է ավարտեն Անգլերեն լեզվի ծրագրերի բաժնի կողմից կազմակերպվող ակադեմիական գրավոր շարադրանքի դասընթաց՝ նախքան ՀԱՀ-ի հիմնական ծրագրի առաջին քառորդի սկիզբը: Բոլոր նոր ընդունված ուսանողները կտեղեկացվեն դասընթացների մանրամասներին:

Դիմումներ ներկայացնելու վերջնաժամկետներ

Դիմորդները պետք է ընդունելության փաթեթը ներկայացնեն համաձայն ներքևում տրված աղյուսակում բերված ժամկետների: Դիմորդներին խորհուրդ է տրվում մինչև վերջնաժամկետը կապ հաստատել իրենց հետաքրքրող բաժինների ներկայացուցիչների, ինչպես նաև Ուսանողական և ուսումնական հարցերով զբաղվող գրասենյակի աշխատողների հետ մանրամասն տեղեկություններ ստանալու համար: Խորհուրդ է տրվում դիմումները բավականին վաղ հանձնել: Կրթաթոշակի և ֆինանսական օժանդակության ծրագրերին դիմելու համար դիմորդները պետք է ամբողջական փաթեթը հանձնեն ընդունելության դիմումաձևի հետ մեկտեղ:
Ամբողջ տարվա ընթացքում ընդունելություն է կատարվում բարձր առաջադիմություն ունեցող դիմորդների համար: Հավելյալ տեղեկություններ ստանալու համար գրել admission@aua.am:

Մագիստրոսի կոչում կամ վկայագիր շնորհող ծրագիր	Հիմնական ծրագրի սկիզբ *	Դիմելու փաթեթի հանձնման վերջնաժամկետ	Անհրաժեշտ քննություններ** (Կամ անգլերեն լեզվի այլ ընդունելի քննություններ / տես ցանկը)
CIS	2012 թ.-ի աշնանային քառորդ	2012 թ-ի ապրիլի 16	TOEFL/GRE
LL.M.	2012 թ.-ի աշնանային քառորդ	2012 թ-ի ապրիլի 16	TOEFL/LSAT
MATEFL	2012 թ.-ի աշնանային քառորդ	2012 թ-ի ապրիլի 16	TOEFL
PSIA	2012 թ.-ի աշնանային քառորդ	2012 թ-ի ապրիլի 16	TOEFL/GRE
MBA	2012 թ.-ի աշնանային քառորդ	2012 թ-ի ապրիլի 16	TOEFL/GMAT
IE&SM	2012 թ.-ի աշնանային քառորդ	2012 թ-ի ապրիլի 16	TOEFL/GRE
MPH	2013 թ.-ի աշնանային քառորդ	2013 թ-ի ապրիլի 16	TOEFL/GRE

* Բոլոր այն ուսանողները, ովքեր կընդունվեն հիմնական ծրագիր, պետք է ավարտեն ակադեմիական գրավոր շարադրանքի պարտադիր դասընթաց, որը կազմակերպում է ՀԱՀ-ի Անգլերեն լեզվի ծրագրերի բաժինը: Բոլոր նոր ընդունված ուսանողներին տեղյակ կպահենք դասընթացների մանրամասներին: Դասընթացի վարձի մասին Ձեզ տեղեկություն կարող է տալ ՀԱՀ-ի Ուսանողական և ուսումնական հարցերով զբաղվող գրասենյակը:
** Դիմորդները պետք է տեղյակ լինեն, որ քննությունների պաշտոնական արդյունքները կարող են ՀԱՀ հասնել հանձնման պահից մինչև 4 շաբաթ անց:

Անգլերեն լեզվի քննություններ	Ընդունելի միավորներ
Ինտերնետային TOEFL (TOEFL iBT)	79 կամ ավել
IELTS	6.5 կամ ավել

Կարևոր տեղեկություն բոլոր դիմորդների համար

Դիմորդները պետք է տեղյակ լինեն, որ հիմնական պահանջներին բավարարելը դեռ չի երաշխավորում իրենց հիմնական ծրագիր ընդունվելը: Քանի որ սահմանափակ թվով ուսանողներ կարող են ընդունվել, ՀԱՀ-ում ընդունելությունը կազմակերպվում է մրցութային հիմունքներով՝ մանրազնին քննարկելով նաև դիմորդի ուսումնական ցուցանիշները և նրա ՀԱՀ-ում սովորելու խթանի լրջությունը:
Ընդունելության գործընթացում տվյալ ծրագիր դիմած թեկնածուների ընտրությունը կատարվում է համեմատական կարգով՝ նույն բաժին դիմածների համապատասխան ցուցանիշները համեմատելով: Յուրաքանչյուր տարվա դիմորդներից ընտրվում են այն թեկնածուները, որոնց որակավորումները համապատասխանում են թե՛ համալսարանի ընդհանուր պահանջներին, թե՛ իրենց ընտրած բաժնին հատուկ պայմաններին: Դիմորդի ընդունվելը կախված է նույն ծրագիր դիմած թեկնածուների ուժեղ կամ թույլ ցուցանիշներից:

Բացառիկ ընդունելություն

Հազվադեպ դեպքերում ընդունելության հանձնաժողովը հատուկ որոշմամբ կարող է ընդունել դիմորդների, որոնց ցուցանիշները չեն համապատասխանում ընդունելության նվազագույն պահանջներին, բայց ովքեր ՀԱՀ-ի ուսանողներ և շրջանավարտներ դառնալու կարողությունները ապացուցող այլ տվյալներ ունեն:
Նման դեպքերում ուսանողներն ընդունվում է պայմանական և անցնում փորձաշրջան: Այս ընթացքում դիմորդները պետք է բավարարեն ընդունելության հանձնաժողովի կողմից հաստատված պայմաններին (թվարկված ընդունելությունը հաստատող պաշտոնական նամակում): Հակառակ դեպքում՝ նրանք կհեռացվեն ՀԱՀ-ից:

Անգլերենի իմացության պահանջ

Քանի որ ՀԱՀ-ում դասավանդման լեզուն անգլերենն է, գրավոր և բանավոր անգլերենի իմացությունը պարտադիր է ՀԱՀ-ի մագիստրոսի կոչում կամ վկայագիր շնորհող ծրագրեր ընդունվելու համար:

Դիմորդը բավարարում է անգլերեն լեզվի իմացության պահանջը, եթե

ա) դիմորդին բակալավրի աստիճան շնորհող հաստատությունում բոլոր առարկաների դասավանդման լեզուն անգլերենն է եղել կամ
բ) ներկայացնի արդյունքներ՝ համաձայն ներքոհիշյալ աղյուսակի

Անգլերեն լեզվի քննություններ	Ընդունելի միավորներ
Ինտերնետային TOEFL (TOEFL iBT)	79 կամ ավել
IELTS	6.5 կամ ավել

79-ից պակաս միավորներ հավաքելու դեպքում դիմորդին կարող է հնարավորություն ընձեռնվել ընդունվելու պայմանական հիմունքով: Արդյունքները պետք է լինեն 2 տարվա վաղեմության՝ քննության հանձնման պահից մինչև դիմումաձևերի հանձնման վերջնաժամկետը:
Այն դիմորդները, որոնց անգլերեն լեզվի գիտելիքները ընդունելության պահանջներին չեն բավարարում, բացառության կարգով, կարող են հաճախել ՀԱՀ-ի Անգլերենի ակադեմիական արագացված դասընթացների ծրագիրը:

TOEFL քննություն

Դիմորդները կարող են հանձնել Ինտերնետային TOEFL (TOEFL iBT) կամ IELTS: Քննության արդյունքները պետք է լինեն երկու տարվա վաղեմության՝ հանձնման պահից մինչև դիմումաձևերի հանձնման վերջնաժամկետը: Դիմորդի պարտականությունն է դիմել Ուսումնական քննական կենտրոն (ETS), որպեսզի քննության պաշտոնական արդյունքներն ուղարկվեն Օուքլենդ, Քալիֆորնիա՝ ՀԱՀ-ի ԱՄՆ-ի գրասենյակ: Քննության արդյունքների խնդրագրում դիմորդը պետք է նշի ՀԱՀ-ի TOEFL-ի հաստատության կոդը՝ 4151 և բաժանմունքի կոդը՝ 99: ՀԱՀ-ում TOEFL-ի միավորները պետք է ստացվեն մինչև դիմումաձևերի ընդունման վերջնաժամկետը:

Ստանդարտացված քննությունների պահանջ

Մագիստրոսի կոչում շնորհող ծրագրի յուրաքանչյուր դիմորդ պետք է, ի լրումն TOEFL/IELTS քննության, հանձնի համապատասխան երկրորդ քննություն: Գործարար կառավարման բաժնի դիմորդը պետք է հանձնի Ավարտական կառավարման ընդունակությունների քննություն (GMAT): Արդյունաբերական ճարտարագիտության և համակարգերի կառավարման, Համակարգչի և տեղեկույթի գիտության, Քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների և Հանրային առողջապահության բաժինների դիմորդները պետք է հանձնեն Ընդհանուր իմացության քննություն (GRE): Իրավագիտության ֆակուլտետի դիմորդները պետք է հանձնեն LSAT:

Այն դիմորդը, ում տվյալները համապատասխանում են ընդունելության ընդհանուր և ծրագրերին հատուկ պահանջներին, ներառյալ անգլերեն լեզվի բավարար իմացությունը, պետք է գրանցվի GMAT/GRE/LSAT քննության համար: Դիմորդը պետք է վճարի քննության համար և հետամուտ լինի, որ քննության արդյունքները հասնեն Օուքլենդ մինչև համապատասխան ծրագրին դիմելու վերջնաժամկետը: Դիմորդն ինքն է պատասխանատու քննությանը ժամանակին գրանցվելու, վճարելու և արդյունքները ժամանակին ներկայացնելու համար: Դիմորդները պետք է տեղյակ լինեն, որ քննությունների պաշտոնական արդյունքները կարող են ՀԱՀ հասնել հանձնման պահից մինչև 4 շաբաթ անց: Ընդունելության համար հաշվի են առնվում միայն այն քննության արդյունքները, որը դիմորդը հանձնել է փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետից առաջ՝ հինգ տարվա ընթացքում: Բոլոր դեպքերում, դիմորդը պետք է հայց ներկայացնի համապատասխան քննական հաստատություն, որպեսզի իր միավորներն ուղարկվեն Օուքլենդ՝ Քալիֆորնիա՝ ՀԱՀ-ի ԱՄՆ-ի գրասենյակ: GRE համակարգում ՀԱՀ-ի կոդը 0676 է, GMAT-ի կոդը ՝ 0284, և LSAT-ի կոդը՝ 0868:

Գրանցում

Մագիստրոսի կոչում կամ վկայագիր շնորհող ծրագրի յուրաքանչյուր ուսանող պետք է ամեն քառորդի սկզբում գրանցվի Ընդունելության և ուսանողական հարցերի գրասենյակում: Ուսանողը գրանցված կհամարվի միայն այն դեպքում, երբ վճարել է ուսման վարձը և լրացրել գրանցման համապատասխան ձևը:

Այն ուսանողը, ով ստանում է ֆինանսական օժանդակություն, Ընդունելության և ուսանողական հարցերի գրասենյակի աշխատակիցներից պետք է ճշտի վարձի վճարելիք մասը: Վճարումները ժամանակին չկատարելու դեպքում (վճարման ժամկետները նշանակվում են նախօրոք Ընդունելության և ուսանողական հարցերի գրասենյակի կողմից) ուսանողը կարող է զրկվել դասերին մասնակցելու իրավունքից և լավագույն ուսանողներին հասնող առավելություններից: Գրանցման վերջնաժամկետից ուշանալու դեպքում ուսանողը պետք է վճարի 25,000 ՀՀ դրամ՝ ուշ գրանցման վճար:

Գրանցված ուսանողը կարող է չեղյալ հայտարարել իր գրանցումը և հետ ստանալ արդեն վճարված գումարը միայն այն դեպքում, երբ տարկետման հայտ է ներկայացնում դասերի սկզբից երկու շաբաթվա ընթացքում՝ տաս շաբաթյա դասերի դեպքում կամ դասի ընդհանուր տևողության 20%-ը չանցած՝ կարճ դասընթացների դեպքում: Ժամկետից ուշանալու դեպքում գումարը հետ չի վերադարձվում:

Տարկետում և վերընդունում

Մագիստրոսի կոչում կամ վկայագիր շնորհող ծրագրի ուսանողը կարող է տարկետում ձևակերպել միայն ֆակուլտետի դեկանի կամ դեկանի տեղակալի համաձայնությամբ: Տարկետումն ընտրովի դասընթացից թույլատրվում է միայն 8-ից 10 շաբաթյա դասընթացների առաջին երկու շաբաթների ընթացքում կամ, երբ սպառվել է տվյալ դասընթացի 20%-ին համարժեք դասերի ժամաքանակը:
ՀԱՀ-ում իր ուսումնառության ընթացքում ուսանողը կարճաժամկետ տարկետում կարող է ձևակերպել միայն մեկ անգամ: Տարկետման պաշտոնական թույլտվություն չստանալու դեպքում՝ ուսանողը կարող է գտնվել տարկետման կարգավիճակում ՀԱՀ-ի տվյալ ծրագրում, սակայն տարկետումից վերականգնման իրավունք կարող է չստանալ:
Ուսանողը, ով տարկետում է ձևակերպել և ցանկանում է վերադառնալ, պետք է դիմի վերընդունելության համար: Վերընդունելության դիմումը Ուսանողական և ուսումնական հարցերի գրասենյակի միջոցով պետք է ներկայացվի համապատասխան Ֆակուլտետի դեկանին՝ համապատասխան ուսումնական քառորդի սկզբից նվազագույնը երեք շաբաթ առաջ:
Համալսարանում պաշտոնական տարկետումից հետո վերընդունում ինքնաբերաբար տեղի չի ունենում: Ուսանողի վերընդունումը կախված է մինչև տարկետում նրա ցուցաբերած առաջադիմության և վերընդունելությունից հետո ընկած ժամանակահատվածում իրեն անհրաժեշտ առարկաների և տեղերի առկայությունից: Ուսանողը պետք է տարկետումից վերադառնա երեք տարվա ընթացքում, որպեսզի իրավունք ունենա մասնակցելու վերընդունելությանը. հակառակ դեպքում նա մշտապես կմերժվի:

Ուսման վարձը և վճարումները

Ընդունվելու պահից մինչև ավարտելը դիմորդը պետք է հատուկ ուշադրություն դարձնի ՀԱՀ-ում իր կրթության ֆինանսավորմանը: Հարկավոր է հաշվի առնել, որ վճարումների չափը կարող է փոփոխման ենթարկվել. այնուամենայնիվ, ուսանողները ստորագրում են պայմանագիր՝ համաձայն որի ամրագրվում է տվյալ ուսանողի ուսման վարձը մինչև պայմանագրի ժամկետի ավարտը: Գրանցման ժամանակ ուսանողը դասվում է ՀՀ քաղաքացի կամ ոչ-քաղաքացի՝ համաձայն Հայաստանի օրենսդրության:

2012թ-ի ՀԱՀ դիմելու վճարը կազմում է 6,000 ՀՀ դրամ՝ Հայաստանի և Հայաստանում երկարաժամկետ կացության կարգավիճակ ունեցող քաղաքացիների համար և 28,000 ՀՀ դրամ՝ օտարերկրյա քաղաքացիների համար:

ՀԱՀ-ի 2012թ-ի ուսումնական տարվա հիմնական ծրագրի ուսման վարձը կազմում է 3,300,000 ՀՀ դրամ (1,100,000 ՀՀ դրամ՝ մեկ քառորդը): Ուսման վարձը նույնն է բոլոր ուսանողների համար, սակայն Հայաստանի, ինչպես նաև Հայաստանում երկարաժամկետ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիները ստանում են վարձի մի մասին համարժեք կրթաթոշակ: Այն գումարը, որը պետք է վճարեն Հայաստանի և Հայաստանում երկարաժամկետ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիները 2012թ-ի ուսումնական տարվա համար կազմում է 960,000 ՀՀ դրամ (320,000 ՀՀ դրամ մեկ քառորդը):

Ֆինանսական օժանդակություն

Ֆինանսական օժանդակություն, կրթաթոշակ կամ վարկ ստանալու համար ուսանողները պետք է լրացնեն հատուկ դիմումաձև: Այն պետք է հանձնվի ընդունելության ամբողջական դիմումաձևի հետ միասին:

Ֆինանսական օժանդակության ծրագրի նպատակն է յուրաքանչյուր հայ ուսանողի տալ իր ֆինանսական կարիքին համապատասխան չափով օժանդակություն: Ֆինանսական օժանդակությունը կարող է կազմել տարեկան ամբողջ վարձի մինչև 90%-ը:

Հայաստանի ամերիկյան համալսարանն առաջարկում է նաև փոխառության ծրագիր, որին կարող են դիմել քաղաքացիությամբ հայ ուսանողները: Ամբողջ ուսման ընթացքում նրանք կարող են ստանալ մինչև 800,000 ՀՀ դրամի չափով փոխառություն: Տվյալ գումարը ենթակա է փոփոխման՝ կախված համալսարանի ֆոնդերից: Ուսման ընթացքում ուսանողներն արդեն սկսում են մարել պարտքը՝ վճարելով 15,000 ՀՀ դրամ երեք ամիսը մեկ հաճախականությամբ: Ավարտելուց ուսանողին տրվում է վճարման ժամացուցակ:

Ժամանակ առ ժամանակ համալսարանի տարբեր բաժիններում կարող են լինել ազատ աշխատատեղեր, ուր, որպես ֆինանսական օժանդակության ծրագրի մաս, կարող են դիմել բարձր առաջադիմություն ցուցաբերող ուսանողները:

Բոլոր ուսանողները կարող են վճարել իրենց ուսման վարձը մասնավճարով: Այս դեպքում ուսանողը վճարում է քառորդի ուսման վարձի 35 % կազմող գումարը, այնուհետև մնացյալ գումարը՝ մաս-մաս՝ մինչև քառորդի ավարտը:

Ուսանողները հնարավորություն ունեն ստանալու նաև կրթաթոշակներ, որոնք տրվում են բարձր առաջադիմություն ցուցաբերող ուսանողներին և ովքեր համապատասխանում են նվիրատուի կողմից սահմանված չափանիշներին:

Ցանկացած ուսանող, ով ուսման ընթացքում հանդիպում է ֆինանսական դժվարությունների, կարող է դիմել ուսանողական հարցերով զբաղվող գրասենյակի տնօրենին կամ ֆինանսական օժանդակության կոորդինատորին: Մանրամասների համար այցելեք մեր ինտերնետային էջը՝ www.aua.am.

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

(Դասախոսական կազմի և առաջարկվող դասընթացների ամբողջական ցանկը տեսնելու համար այցելեք www.aua.am, սեղմեք «Ակադեմիական ծրագրեր», հետո «Ճարտարագիտության ֆակուլտետ»)

Ծրագիրը և նպատակը

Արդյունաբերական ճարտարագիտության և համակարգերի կառավարման (ԱՃՀԿ) ֆակուլտետի նպատակն է ուսանողներին տալ բազմակողմանի կրթություն հետևյալ ոլորտներում՝ ճարտարագիտության և գործողությունների կառավարում, արտադրական համակարգեր, տեղեկատվական տեխնոլոգիաներ և հաղորդակցություն: Մի շարք հիմնական դասընթացների միջոցով ուսանողը ծանոթանում է խնդիրների ձևակերպման և լուծման հիմնական մեթոդներին:
Հատուկ ուշադրություն է դարձվում տնտեսական հարցերին, պահանջարկի և կարողությունների անորոշ բնույթին, անորոշության մեջ որոշումների կայացման հիմունքներին, տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործմանը, մեծ համակարգերի ձևավորմանը և վերլուծությանը, արդյունավետ լուծումներ գտնելու եղանակներին: Ուսանողներին առաջարկվում են դասընթացներ հետևյալ ոլորտներում՝ համակարգչային նախագծում և արտադրություն, կառավարում, աշխատանքային վարքագիծ և օպտիմիզացում: Այցելու դասախոսների կողմից առաջարկվում են հավելյալ մասնագիտական թեմաներ հետազոտությունների և զարգացման նոր ոլորտներում: Ծրագրի հիմնական հատկանիշներից է ուսանողների ընդգրկումը արդյունաբերական գործարանների հետ համատեղ իրականացվող արտադրության ժամանակակից մեթոդների ինտեգրատիվ նախագծերում: Այս դասընթացը ուսանողներին հնարավորություն է ընձեռում ձեռք բերելու իրական կյանքի փորձ, ինչպես նաև զարգացնելու կապերը Հայաստանի արդյունաբերության հետ: Ուսանողները պատրաստում են հաշվետվություններ և կատարում են բանավոր զեկուցում-ներկայացումներ բազմաթիվ դասընթացների ընթացքում՝ զարգացնելու համար իրենց հաղորդակցման հմտությունները:
Ժամանակակից տեխնոլոգիական խնդիրները պահանջում են լուծումներ, որոնք ձևավորվում են բազմակողմանի մոտեցումների արդյունքում: Արդյունաբերական ճարտարագիտության և համակարգերի կառավարման ֆակուլտետը խրախուսում է իր ուսանողներին երկրորդ մասնագիտություն ընտրել Գործարար Կառավարման կամ Համակարգչի և տեղեկույթի գիտության ոլորտներում՝ ամրապնդելու իրական կյանքի խնդիրների բարդության գնահատումը և բազմակողմանի լուծումների անհրաժեշտությունը:

ՀԱՄԱԿԱՐԳՉԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒՅԹԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

(Դասախոսական կազմի և առաջարկվող դասընթացների ամբողջական ցանկը տեսնելու համար, այցելեք www.aua.am, սեղմեք «Ակադեմիական ծրագրեր», հետո «Ճարտարագիտության ֆակուլտետ»)

Ծրագիրը և նպատակը

Հայաստանի ամերիկյան համալսարանի Համակարգչի և տեղեկույթի գիտության ծրագիրը կիրառական բնույթ ունի: Այն օգնում է ուսանողներին ձեռք բերելու այն անհրաժեշտ հմտությունները, որոնք պահանջվում են արդյունավետ ղեկավարներ դառնալու Հայաստանի համակարգչային և նրան կից արդյունաբերություններում: Որպես այսպիսին, ակնկալվում է, որ ուսանողները խորապես տիրապետեն այս ոլորտի տեխնիկական մասին, ինչպես նաև գործարարությանը, կառավարմանը և ձեռներեցությանը: Այս ամենին հասնելու

համար ծրագիրն օգտագործում է ՀԱՀ-ի մագիստրոսի կոչում շնորհող այլ ծրագրերի հնարավորությունները:
Ծրագրին բնորոշ է ներառել ուսանողներին լսարանում ձեռք բերված գիտելիքների կիրառման համապատասխան փորձի մեջ: Այսպիսի փորձն իրականացվում է ուսումնական ծրագրում ընդգրկված պարտադիր անցկացվող պրակտիկայի օգնությամբ: Այս պրակտիկան հնարավորություն է ընձեռում ուսանողներին ձեռք բերելու իրական աշխարհի փորձառություն՝ ամբողջացնելով մի նախագիծ արդյունաբերությունում կամ կառավարման կազմակերպություններում: Այս փորձը կօգնի ուսանողներին կիրառելու իրենց գիտելիքները, ինչպես նաև ավելի լավ հասկանալու ոլորտի սոցիալ-մշակութային կողմերը: Այս ամենը որոշիչ դեր է խաղում նախագծերի բարեհաջող ավարտի համար:

ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՈՉՈՒՄ

(Դասախոսական կազմի և առաջարկվող դասընթացների ամբողջական ցանկը տեսնելու համար այցելեք www.aua.am, սեղմեք «Ակադեմիական ծրագրեր», հետո «Գործարար կառավարում»)
FTMBA Գործարար կառավարման մագիստրոսի ցերեկային ծրագիր
PMBA Գործարար կառավարման մագիստրոսի երեկոյան ծրագիր

Ծրագիրը և նպատակը

ՀԱՀ-ի Գործարար կառավարման բաժնի առաքելությունն է առաջարկել բարձր մակարդակի կրթություն գործարար ձեռներեցության և ակադեմիական ոլորտներում հաջողության հասած առաջնորդների, ինչպես նաև խթանել կառավարման ըմբռնման խորացումն ու կիրառումը՝ հետազոտությունների, գործնական վերլուծությունների և նախագծերի միջոցով: Գործարար կառավարման բաժինը գնահատում և արժևորում է տվյալ աշխարհագրական տարածաշրջանում առկա տարբերությունները: Ֆակուլտետի նպատակն է պատրաստել ապագա գործարար ձեռներեցներ, մասնավոր, պետական և հասարակական կազմակերպությունների աշխատողներ, ղեկավարներ և տնօրեններ: Մագիստրոսի կոչում շնորհող Գործարար կառավարման այս ծրագիրը նախատեսված է օգնելու ապագա ղեկավարներին՝ համընդհանուր մրցակցության միջավայրում ազատ և արդյունավետ գործելու:

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍ

(Դասախոսական կազմի և առաջարկվող դասընթացների ամբողջական ցանկը տեսնելու համար, այցելեք www.aua.am, սեղմեք «Ակադեմիական ծրագրեր», հետո «Հանրային առողջապահություն»)

Ծրագիրը և նպատակը

Հանրային առողջապահության մագիստրոսի (MPH) կոչում շնորհող ծրագիրն առողջապահության բնագավառի որակյալ մասնագետներին օժտում է առարկայի հիմնավոր իմացությամբ, որպեսզի կարողանան, բնակչության տվյալների հիման վրա, մոտեցումներ գտնել առողջապահության ոլորտի հետ առնչվող հարցերի բացահայտման, դրանց ուսումնասիրության, քննարկման և արհեստավարժ լուծման համար: MPH ֆակուլտետի հիմնական նպատակն է պատրաստել առողջապահության ոլորտի արհեստավարժ մասնագետներ, ովքեր առարկաներից ձեռք բերված գիտելիքների և փորձի օգնությամբ կկարողանան սահմանել, քննադատաբար գնահատել և լուծել հանրային առողջապահության վրա ներգործող խնդիրները: Ծրագիրն ուսանողներին տալիս է

խնդիրներ լուծելու և հետազոտական մեթոդոլոգիաների տեսական հիմք, ինչպես նաև այս գործոններին հենք հանդիսացող ուսմունքների ամուր հասկացողություն:

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱԳԻՍՏՐՈՍ

(Դասախոսական կազմի և առաջարկվող դասընթացների ամբողջական ցանկը տեսնելու համար, այցելեք www.aua.am, սեղմեք «Ակադեմիական ծրագրեր», հետո «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ»)

Ծրագիրը և նպատակը

Քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների մագիստրոսի կոչում շնորհող ծրագիրն ուսանողներին տալիս է 21-րդ դարի քաղաքական իրավիճակի հետ առնչվող առարկաների համապարփակ հավաքածու: Այս ֆակուլտետը հիմնական շեշտը դնում է վերլուծական, տրամաբանական և խնդիրների լուծման ունակությունների ձևավորման վրա՝ միջազգային, համեմատական և տեղական կառավարման հաստատությունների ու գործընթացների ուսումնասիրության միջոցով: Ֆակուլտետի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ և զարգացնել վերլուծական մտածելակերպ՝ կառավարման օղակներում որպես դիվանագետներ, վարչական ղեկավարներ, քաղաքական վերլուծաբաններ և հետազոտողներ աշխատելու, ինչպես նաև մասնավոր ոլորտում արդյունավետ գործունեություն ծավալելու և հասարակության մեջ փոփոխություն բերողներ լինելու համար: Շնորհիվ ծավալուն և ճկուն ուսումնական ծրագրի՝ ուսանողները կարողանում են ավելի լավ հասկանալ միջազգային և շրջանային քաղաքական կյանքի փոխկապակցվածությունը, ինչպես նաև Հայաստանում տեղի ունեցող փոփոխությունների վրա ազդող սոցիալ-տնտեսական խնդիրները: Ֆակուլտետի մոտեցումը բազմաբնագավառային է: Հատուկ ուշադրություն է տրվում տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում ժողովրդավարական կառավարման ամբողջական ըմբռնման վրա:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՈՉՈՒՄ (LL.M.)

(Դասախոսական կազմի և առաջարկվող դասընթացների ամբողջական ցանկը տեսնելու համար, այցելեք www.aua.am, սեղմեք «Ակադեմիական ծրագրեր», հետո «Իրավագիտության բաժին»)

Դեկանի ուղերձը

Մասնագետներ պատրաստելու իր արդեն 10 տարուց ավել փորձառությամբ զինված՝ ՀԱՀ-ի Իրավագիտության մագիստրոսի կոչում շնորհող ծրագիրը հանձնառու է իր իրազեկ և մրցունակ շրջանավարտ-մասնագետներ պատրաստելու նպատակին՝ ի խնդիր Հայաստանի և տարածաշրջանի զարգացմանը: Հավատարիմ լինելով իրավունքի՝ որպես ծառայողական մասնագիտության և հասարակության բարեկեցությանն ուղղված ուսմունքի մեր ըմբռնմանը, մենք ձգտում ենք խրախուսել արդարությունը և արդյունավետությունը առօրյա կյանքի հանրային և մասնավոր գործարքներում: Փորձառու իրավաբանական խորհրդատուները և իրավաբանները կարևոր դեր ունեն տնտեսական բարգավաճման, ինչպես նաև օրենքների, կանոնակարգերի, հաստատությունների քաղաքականությունների շրջահայաց նախագծումների խթանման գործում:
Աշխարհն անընդհատ փոխվում է, և դրա հետ փոփոխվում է նաև իրավունքը: Իրավաբանի կրթությունը երբեք ավարտուն չէ: Սակայն իրավաբանները աշխարհի ամենազբաղված մասնագետներն են: Այս պատճառով ՀԱՀ-ի Իրավագիտության բաժինն առաջարկում է

ՀԱՀ-ում իրավաբանական կրթության ձեռքբերման մի շարք նոր և հարմարավետ եղանակներ: Մեր ուսումնական նոր ծրագիրը՝ բաղկացած 6 թեմատիկ մոդուլներից, հնարավորություն է տալիս արագ և խտացված ուսման՝ հղկելու համար որոշակի հմտություններ: ՀԱՀ-ի առաջարկած ակադեմիական աստիճան չստացող ուսանողի նոր կարգավիճակը (non-degree student) ավելի, քան երբևէ հեշտացնում է միայն մեկ կամ երկու առարկա վերցնելու և կրթությունը քայլ առ քայլ շարունակելու գործընթացը: Այնպես որ մի՛ հապաղեք:

Մենք խրախուսում ենք ազնիվ, խելացի, ծառայելու հանձնառու և արդարությանը նվիրված ուսանողներին ՀԱՀ-ում իրավական կրթություն ստանալու, ձեռք բերելու ամերիկյան, եվրոպական, համեմատական, միջազգային հանրային և մասնավոր իրավունքի բնագավառում համաշխարհային շուկայում հաջողության հասնելու համար անհրաժեշտ գիտելիքներ և գործնական հմտություններ:

ԱՆԳԼԵՐԵՆԻ՝ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀՈՂ ԾՐԱԳԻՐ (MA TEFL)

(Դասախոսական կազմի և առաջարկվող դասընթացների ամբողջական ցանկը տեսնելու համար, այցելեք www.aua.am, սեղմեք «Ակադեմիական ծրագրեր», հետո «Անգլերեն լեզվի բաժին»)

Ծրագիրը և նպատակը

Անգլերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման մագիստրոսի կոչում շնորհող ծրագիրը (MA TEFL) անգլերեն դասավանդողներին, ուսումնական ծրագիր և տեստեր մշակողներին, ուսուցիչներ վերապատրաստողներին ընձեռում է լեզվի դասավանդման խորացված ուսումնասիրության հնարավորություն:

Ընդունելության պայմանները

Ի լրումն համալսարանի ընդունելության ընդհանուր պայմանների՝ այս ծրագրի դիմորդները պետք է հաջողությամբ ավարտեն ՀԱՀ-ի Անգլերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման վկայագիր շնորհող ծրագիրը (CTEFL) կամ դրան համարժեք այլ ծրագիր՝ գնահատականների առնվազն 3.50/4.00 միջինով:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել

Ուսանողական և ուսումնական հարցերի գրասենյակ
Հայաստանի ամերիկյան համալսարան, Մ.Բաղրամյան 40
Երևան, Հայաստան, 0019
Հեռախոս. [+37410] 51-27-91
Էլեկտրոնային հասցե : admission@aua.am
Կայք էջ. www.aua.am

Համալսարանն իրեն իրավունք է վերապահում փոփոխություններ կատարել տվյալ գրքույկում առանց որևէ նախօրոք զգուշացման: Խորհուրդ է տրվում պարբերաբար այցելել համալսարանի Ուսանողական և ուսումնական հարցերով զբաղվող գրասենյակ ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու համար:

ՀԱՀ-ը բաց է բոլոր այն ուսանողների համար, ովքեր ունեն համապատասխան ակադեմիական ցուցանիշներ, խտրականություն թույլ չտալով՝ հիմնված ցեղի, ծագումի, սեռի կամ հավատքի վրա:

ԳԻՏԵ՞Ք, ՈՐ

- ՀԱՀ-ում կարող եք ստանալ արևմտյան ոճի կրթություն՝ վճարելով ԱՄՆ-ում ուսանելու տարեկան վարձի ընդհամենը 1/10րդ մասը

- ՀԱՀ-ը հրավիրում է դասախոսներ ԱՄՆ-ից և Եվրոպայից, այնպես որ արտասահման մեկնելու կարիք չկա

- ՀԱՀ-ն առաջարկում է կրթաթոշակներ և վարկեր՝ հնարավորություն ընձեռելով ուսանողներին՝ նվազեցնելու իրենց ծախսերը

- ՀԱՀ-ի յուրաքանչյուր բաժին ունի իր հետազոտական կենտրոնը, որտեղ ուսանողները կիրառում են լսարանում ձեռք բերած գիտելիքները և վաստակում ապագա աշխատանքի համար անհրաժեշտ փորձառություն

- ՀԱՀ-ի շրջանավարտների 95%-ն այսօր աշխատանք ունի

Ահա մի քանի պատճառներ, թե ինչու Դուք պետք է մտածեք շարունակելու Ձեր կրթությունը ՀԱՀ-ում: Ընտրեք մասնագիտություն և սկսեք կերտել Ձեր ապագան հենց այսօրվանից: